ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի № 457-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի № 1000-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. 2024 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի «Հրազդանի թիվ 6 մանկապարտեզ», «Հրազդանի թիվ 8 մանկապարտեզ» և «Հրազդանի թիվ 11 մանկապարտեզ», Աբովյան համայնքի «Արամուս վարչական շրջանի մանկապարտեզ» և «Բալահովիտ վարչական շրջանի մանկապարտեզ», Նաիրի համայնքի «Արագյուղ վարչական շրջանի մանկապարտեզ», «Բուժական վարչական շրջանի մանկապարտեզ», «Պռոշյան վարչական շրջանի մանկապարտեզ» և «Զուվունի վարչական շրջանի մանկապարտեզ» ու Ակունք համայնքի «Նորգյուղ վարչական շրջանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման գործընթացի, ձեռքբերված գույքի քանակական և որակական համապատասխանության ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) ***Միհր Գևորգյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

2) ***Հարություն Ալեքսանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ,

3) ***Կարեն Հունանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

4) ***Թերեզա Մաթևոսյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ուսումնասիրության ավարտից հետո տասնօրյա ժամկետում՝ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի նոյեմբերի 13
ք. Հրազդան